

368.5

Հ - 11

ՀՐԱՀԱՆԳ

Յ. Ա. Խ. Յ. ՊԵՏԱՊԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

ՀԱՇՎԱՐԿԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՆՔԱԿԱ ՈԲՅԵԿ-
ՏՆԵՐԻ — ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ, ԳԱՆԶՄԱՆ, ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՐՏՈ-
ՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՇԽԱՍԱՆ, ԸՆՏ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՊԱՐ-
ՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

1928 — 1929 ԳՈՐԾ. Տ.

2802-10

368.5

2-11

Վ

ՅԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Հ. Ս. Խ. Հ. սահմաներում պետական կոպարային պարտագիր ապահովագրության յենթակա յեն զյուղական վայրերում զյուղատնտ. անասունները՝ այսինքն՝ խոշոր յեղջյուրավոր անասունները, ձիերը, ջորիները, ուղտերը և ավանակներն անկումից ու զյուղատնտեսական մշակույթները կարկտահարությունից. իսկ քաղաքներում՝ Ձերևան, Լենինական, Մարտունական և Դիլիջան, բացի այդ և շենքերը կրակից, վերոհիշյալ գույքը յենթակա յե կոպարահին պարտագիր ապահովագրության, յեթե պատկանում ե մասնավոր անհամաններին ֆիզիքական և իրավաբանական (ընկերություններին, արտելներին, կոմունաներին և այլն), կամ կոռպերատիվ կազմակերպություններին, յեթե վերջինը չի ապահովագրված կոռպերատիվ ապահովագրությանմբ, կոպարային ապահովագր. տեսակները սահմանվում են ՍՊԸ-ի վորոշմամբ:

§ 2 Կոպարային պարտագիր ապահովագրության յենթակա գույքը համարվում է ապահովագրված հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն, ըստ Աշխատանքի և Պաշտպանութեան Աշխատանքի:

թիւն Խորհրդի կողմից յուրաքանչյուր գործառնական տարվա համար սահմանված նորմաների և տարիքների:

§ 3. Կոպարի կտմավոր մուծման համար սահմանվում է ԱՊԽ.ի կողմից վորոշ ժամկետ, վորից հետո չգանձված ապահովագրական վրճառությունները դառնում են հետութ և յենթակա յեն դանձման անվիճելի՝ վարչական կարգով:

II.

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 4. Հ.Ս.Խ.Հ. Ֆինժողկոմատի համաձայնությամբ, կոպարալին պարտագիր ապահովագրության յենթակա ոբյեկտների յուցակազրությունը կատարում է ինքը՝ Ֆինժողկոմատը, իրեն ապարատի միջոցով։ Գործակալները և պետապի մյուս աշխատակիցները յուցակազրական աշխատանքներին անմիջականորեն չը մասնակցելով հանդերձ, իրագործում են յուցակազրության վրա ընդհանուր հսկողություն, յուցմունքներ տալով յուցակազրողներին և բոլոր նկատված թերությունների մասին հաղորդելով համապատասխան գավֆինքաժնին, իսկ ավելի կարեոր և սկզբունքային հարցերի մասին հաղորդում՝ Հայութապին։

Ֆինժողկոմատի յուցակազրության յուցակազրական յուցակում ըստ գյուղատնտեսական

միտասուրքի սահմանված և համապատասխան առնյակներ, վորոնցում ֆինժողկոմի ցուցակագրողները նշում են պետապին անհրաժեշտ տեղեկությունները, թե բուսական մշակույթների և թե անասունների ապահովագրության նկատմամբ։

Ֆինժողկոմատի բնավայրերի ցուցակներից ոգովելու մասին կա հասուեկ շրջաբերական, ուղարկված գործակալներին (տես շրջաբեր. № 43, 18-ն մայիսի, 1928 թ.):

III

ԿՈՊԱՐԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԼՐԱՑՆԵԼԸ

§ 5. Գավ. գործակալները վորոշյալ ժամկետին պարտավոր են պայմանագործել զավթինքածնի հետ, վոր վերջինը բնավայրերի ցուցակները ներկայացնի ժամանակին, վորպեսզի պետապի աշխատակիցները, վերջինին անհրաժեշտ տեղեկությունները արտազրեն կոպարային ցուցակների մեջ (Զեվ. գ. թ. № 1):

§ 6. ԿՈՊԱՐԱՅԻՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ.— (Զեվ. գ. թ. № 1) Հենց վոր բնավայրերի ցուցակները սուսացվում են գավֆին բաժնում, պետապի գավառային գործակալները պետք են միջոցներ ձեռք առնեն ցուցակազրության տվյալները կոպարային ցուցակներում արտազրելու համար (Զեվ գ. թ. № 1), համաձայն գործակալներին ուղարկված հատուեկ հրահանգի (տես շր. № 43,

18-ն մայիսի 1928թ.):

Հաշվառման տվյալների արտադրությունը պետք է կատարել գավ. ֆինբաժնի հաշվարկային աշխատանքներին զուգահեռ, սակայն այնպես, վոր չը խանդարի ֆին. բաժնի աշխատանքները և արտադրությունը վերջանա վոչ ուշ, քան հունիսի վերջը:

Յուրաքանչյուր շրջանի գործակար ողնական կամ գործավար արտադրությունը կատարելու է ինքը, իր շրջանի համար, ի հաշիվ արտադրության համար բաց թողած գումարից Գյուղատնտեսական միասնարկի տվյալների արտադրությունը կոպարային ցուցակների մեջ, ուհանակում ե գործարքային վարձատրություն, յուրաքանչյուր տնտեսության համար մեկ կոպեկ, թե գործակալության աշխատակիցների և թե հրավիրված այլ անձանց, վորոնք այդ աշխատանքը կառարել են. Յեթե գավ. գործակալներին չե հաջողվում իրենց հաստիքով (ուժերով) կատարելու այդ աշխատանքը, ապա նրանք, կարող են հրավիրել գլուխց ցուցակագրողներ, նախորդ պատրաստելով (հրահնագելով) նրանց այդ աշխատանքի համար և ապա գործակալության աշխատակիցների հետ միասին կատարում վերոհիշյալ աշխատանքը:

Կոպարային ցուցակը գործակալի համար գառնում է ցուցակագրական և անվանական և

այդ ցուցակը փոխարինում ե նույնպես և հետևող թափաների ցուցակին: Լրացվում է 2 որինակ թանաքով կամ քիմիական մատիտով: Ի նըկասի ունենալով այդ, ցուցակը պետք է լրացնել ճշությամբ և առանց ջնջումների:

Բոլոր տեսակի ապահովագրությունների համար կոպարային ցուցակը մեկ է, յուրաքանչյուր ապահովագրվողի համար լրացվում է միայն մեկ տող և այդ միենաւոյն ապահովագրվողը ցուցակում պետք է հիշատակվի մեկ անգամ:

IV

ՅՈՒԹԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆ

§ 7. Յուցակագրության տվյալները արտադրելուց հետո, մինչև կոպարի հաշվարկը՝ համեմայն գեպս վոչ ուշ քան սթ հունիսի 15-ը տեղերում կատարել Ֆ. Փ. Կ ի ցուցակագրության տվյալների փաստացի ստուգումը:

Դրա համար, գործակաները պարտավոր են հրապարակորեն գյուղական համայնքներում ժողովներում հայտարարել ցուցակագրության արվաները, ըստ յուրաքանչյուր տնտեսության և նույնպես կատարել յուրաքանչյուր գյուղում 5-10 տնտեսությունների տուն առ տուն ստուգում և համապատասխան ուղղումները մացնել կոպարային ցուցակների մեջ: Այդ ուղղումների փոփոխությունների ստուգման ժամանակ, ինչպես

և առանձին ապահովագրվողների հայտարարության հիման վրա, գործակալները պետք ե կատարեն ուղղում, միանգամայն պարզ կերպով, անպայման կարմիր թանաքով:

Կոպարային ցուցակներում անհրաժեշտ ուղղումները սացնելուց հետո, ստորագրվում են գյուղ խորհուրդների կողմից և հաստատվում՝ նրանց կնիքի գրոշմամբ:

§ 8. ՅԵՆԹԱՐԻՎԱԾ ԳՈՂՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Հոկտեմբերի 1-ից և առհաստրակ կոպարի հաշվարկելուց հետո, ծանուցագրերը (Զեփարակ գ. թ. № 2) գանձողներին հանձնելուց հետո, խստիվ արգելվում ե կոպարային ցուցակների մեջ մտցնել մի վորեն ուղղում կամ լրացում:

ԾԱՆՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Կոպարային ցուցակները կազմելիս, յեթե վորեն գյուղ բաց թողնված կլինի, կոպարային ցուցակ կազմելը, կոպարային հաշվարկ կազմելը և ապահովագնեցանումը կատարվում ե ընդհանուր հիմունքներով:

V

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒԹՅ

§ 9. ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԵԼԸ ՅԵՎ ՀԱՍՏԵԼԸ.— Միաժամանակ ցուցակագրության ստուգման հետ (§ 7), չքավոր բնակչությանը՝ կարմիր բանակայինների ընտանիքներին և գաղ-

թականներին արտօնություններ տալու նպատակով, գործակալները պետք ե այժմ և յետ ձեռք առնեն բոլոր միջոցները, պյուղխորհուրդների հետ միասին այդպիսիների ցուցակները կազմելու համար, դեկավարվելով հանրապետական Տնտեսական կողմից հաստատված 1927-28 հրահանգներով. (տես. շր. № 52, 30-ն հունիսի 1928 թ.): Այդ ցուցակները ստուգվում և հաստատվում են. (արձանագրութեամբ) հասուլ գյուղական հանձնաժողովի կողմից, հետեւյալ կազմով՝ գյուղխորհուրդի նախագահ, գյուղկոմ, բատրակկոմ: Այդ հանձնաժողովը հաստատում և ցուցակի մեջ և մացնում արտօնությունների չափը, ըստ յուրաքանչյուր անտեսության (այսինքն լրիվ, կամ մասամբ $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$), առանց գումարը ցույց տալու:

§ 10. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՂԱԾՄԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱՌՈՒՄՆԵՐԸ.— Կոպարը հաշվարկելուց և հետնույթները պարզելուց հետո, գործակալը անհապաղ կերպով լրացնում ե ըստ արտօնության Զեվ № 9-ի 5, 6, 7, 8, 9, 10, 11 և 12 սունյակները արտօնության համապատասխան գումարները, համաձայն այն չափերի (այսինքն լրիվ կամ մասամբ, $\frac{1}{2}$, $\frac{1}{3}$), վորոնք սահմանված են վերոհիշյալ հանձնաժողովի կողմից: Արտօնությունների գումարները գործակալը նշանակում ե կոպարային ցուցակ-

ների մեջ, յուրաքանչյուր ազատված տնտեսության դիմաց. հիմնական կոպարային ցուցակի (28-րդ սունյակում գրվում ե տրտոնության դումարը ըստ կոպարի, իսկ 29-րդ սունյակում՝ արտոնությունները՝ ըստ հետնույթների):

§ 11. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐՈՒՄԸ. — Արտոնություններ ստացած քաղաքացիների ցուցակների պատճենները ձեվ № 9 քարտի վրա, յուրաքանչյուր տնտեսության մեջ գումարներով, հատուկ կատարելը և վոչ նշված գումարներով, հատուկ կատարելը և վոչ նշմարելի սույն թվի սեպտեմբերի 20-ը հանձնում ե գյուղխորհուրդներին, վորպեսզի վերանում հայտարարեն այդ գյուղական համայքշիներս հայտարարեն այդ գյուղական համայքշիների ժողովներում և փակցնեն գյուղ խորհրդում նշմարելի տեղում:

§ 12. ՇՐՋԱՆԱԴՆԱՄՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՍՏԱՆՎԱԾ ցուցակները գյուղ բաժնի ձեվ № 9 ի քարտի վրա պահպում ե գործակալության առանձին գործերի մեջ (գործ, արտոնությ. ազատվածների):

Այդ ցուցակների հիման վրա, գործակալը ամեն ամիս ներկայացնում է զրամենյակ փաստորեն արված արտոնությունների հավաքական տեղեկագիրը, համաձայն որինակի, ընդհանուր դումարներով, գյուղ առ գյուղ, ըստ սունյական բաժների բաժանելով ազատվածների առանձին խմբերը (կատեղորիաները) գյուղ բաժնի ձեվ № 9 բերը (կատեղորիաները)

քարտի վրա, ըստ վորում «ազգանուն» սունյակում գրվում ե գյուղի անունը (տես հարակից ուղարկված ձեվը): Գյուղական կոպարային ապահովագրության ըստ արտոնությունների ազատման մոտավոր 0% ը կոպարի հաշվարկի մոտ 12% ն ե կազմելու:

Կոպարից ազատված տնտեսությունը, նույն չափով ազատվում ե հետնույթից. որինակ Զարչյան Մամիկոնի 1928.29 գ. ա. կոպարը կազմում ե 5 սուրլի, հետնույթ 2 սուր. ընդամենը 7 սուրլի: Համաձայն տնտեսական խորհրդի հրահանգի, նաև յենթակա յե ազատման 50% ով, հետևապես, նաև ազատվում ե կոպարից 2.50 կոպ., հետնույթից 1 սուրլի, ընդամենը 3 ո. 50 կոպեկ, իսկ մնացած 3 ո. 50 նամուծում ե:

§ 13. Բաղաքի հնամանավանդ գյուղի բընակչության պետք ե հաղորդել արտոնությունների մասին, կոպարի գանձումից առաջ, վոչ ուշ քան հոկտեմբերի 1-ը:

VI

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՎԱՐԿԸ

§ 14. ՀԱՅՎԱՐԿԸ. — Գրասենյակից ապահովագնի նորմաները և ապահովագնի տարիքները ստանալուց հետո, գործակալը պետք է սկսի

կազմել կոպարի հաշվարկը և կոպարային ցուցակները այն հաշվով, վոր վերջացնի վերահիշյալ աշխատանքը, վոչ ուշ քան ոգոստոսի 15. ըբեկան աշխատանքը,

Հաշվարկի և ապահովագնի համար կոպարային ցուցակն ունի սունյակներ, ըստ ապահովագրության տեսակների և ապահովագնի տարիփների:

Կոպարի հաշվարկը կազմվում է հետեւյալ ձևով.

ա) բոլոր խոշոր յեղջուրավոր անասունների համար ապահովագրության տեսակները՝ ապահովագնի տարիփը ցույց է տրվում (6, 7, 8, 9, 10 սունյակում), ապահովագնի ընդհանուր գումարը դուրս է բերվում 11-րդ սունյակում: բ) Նույն ձևով հաշվարկվում է նաև ձիյակում: գ) Նույն ձիյակում հաշվարկվում է ավանակները (12, 13, 14 երը, սւզաերը և ավանակները), ապահովագնի ընդհանուր գումարը հաշվում 15-րդ սունյակում: դ) Պյուղատնտեսական մշակույթները հաշվարկվում են յուրաքանչյուր դաս առանձին (17, 21, 25 սունյակներում): ե) 26-րդ սյունյակում, ի մի յե գումարվում բոլոր տեսակի կոպարային ապահովագրության ապահովագնի ընդհանուր գումարը և յե) 27-րդ սյունյակում գրվում է նախկին տարիներից մնացած հետնույթը:

Ցուրաքանչյուր տեսակի ապահովագրության համար ապահովագնը վորոշվում է մին-

չև 1 կրպ. ճշտությամբ, ընդ վորում, կես կոպեկ ու ավելին, ընդունվում է վորակես մեկ կոպեկ, իսկ $\frac{1}{2}$ կոպեկից պակասը՝ հաշվի չի առնվում:

Մանօքուրյուն. — 4-րդ և 5-րդ սկրակից ապահովագրության սունյակները լրացվում են միայն այն քաղաքներում, վորակեղ տարվում են այդ ապահովությունը.

§ 15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՅԹԱԳՐԵՐ. — Գործակալը վերջացնելով հաշվարկը կոպարային ցուցակում, սկսում է կազմել ապահովագրական ծանուցագրերը (Զե գ. բ № 2): Ծանուցագրերը պետք են կազմված լինեն շատ մաքուր և ուղարկված տերերին, վոչ ուշ քան սեպտեմբերի 10-ը: Ցեթեւ գործակալության աշխատակիցները վորոշյալ ժամկետին չեն վերջացնի ծանուցագրերի զրելը, ապա գործակալը կարող է հրավիրել այլ անձանց, այդ աշխատանքները կատարելու:

Մեկ տնտեսության ծանուցագրի գրելու համար, սահմանվում է մեկ կոպեկ վարձատրություն:

Լրացնելով ապահովագրական ծանուցագրերը գործակալը հանձնում է այդ գանձողներին (Պյուղիսորհրդներին), վորոնք իրենց հերթին հանձնում են տերերին:

Միաժամանակ ծանուցագրերի հետ, գործակալը կազմում է յուրաքանչյուր պյուղի

վճարահատուցման—անվանական ցուցակը (Զե-
գ. բ. № 1 ա.) հանձնում գանձողներին, (գյուղ-
խորհուրդներին), վորով և վերջինը կատարում
ե գանձումը, նշելով ցուցակում գանձված
գումարը՝ կոպար, հետնույթ, առույժ և արփած
անդորրագրի №-ը:

§ 16 ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵ-
ՂԵԿԱԳԻՐ (Զե գ. բ. № 5).—Հաշվարկը վեր-
ջացնելուց և գանձողներին ապահովագրական
ծանուցազբերը հանձնելուց հետո՝ դորձակալը
կտգմում է գործակալության հիմնական տե-
ղեկագիր (Զե գ. բ. № 5), ըստ կոպարային
ցուցակի տվյալների: Տեղեկագրի բոլոր սյուն-
յակների ընդհանուր գումարը հանվում է առան-
ձին, յուրաքանչյուր համայնքի համար և ապա-
ամբողջ շրջանի: Յեթե գործակալության ըր-
ջանում կան նաև քաղաքներ, տեղեկագրում՝
բացի այդ պետք ե ընդհանուր գումարը հան-
վի գյուղական վայրերի համար առանձին, քա-
ղաքների՝ համար առանձին, բացառությամբ
գյուղանահասական մշակույթների, վորը հաշ-
վում է գյուղական:

Հաշվարկի տեղեկագիրը գործական ու-
ղարկում՝ և գրասենյակ վոչ ուշ հոկտեմբերի
15-ից, իսկ լրացուցիչ տեղեկագիրը՝ յուրա-
քանչյուր ամսի 7-ին:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒԹՅԻՉ ՏԵՂԵ-

ԿԱԳԻՐ.—(Զե գ. բ. № 5) կազմվում է լրա-
ցուցիչ հաշվարկի փաստագես ստացված վճա-
րումների համար: Տեղեկագրի վրա գրվում է
նկատողություն «գործակալության լրացուցիչ
տեղեկագիր, . . . ամսվա, 192 թ.»: «Տըն-
տեսությունների թիվը» սունյակում գրվում է
միայն նոր ցուցակագրված ու գրանցված տըն-
տեսությունները.—

Իսկ յեթե ցուցակագրված են մեկ կամ
մի քանի գլուխ անասուն, կամ նոր տարածու-
թյուն, արդեն ցուցակագրված անտեսության
մեջ, այդ սունյակում վոչ մի տեղեկություն
ցույց չի տրվում, այլ միայն համապատասխան
սունյակում ցույց ե տրվում այդ առանձին
լրացումների ապահովագրումարը:

§ 17 ԼՐԱՑՈՒԹՅԻՉ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ՀԱՇՎԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ՀԱՇՎԱԿԱԳՐԿ. — Այն տերերի համար, վո-
րոնց մոտ հոկտեմբերի 1-ից մինչև հունիսի
30-ը ժամանակաշրջանում, այսինքն՝ հիմնական
կոպարի դուրս բերելուց հետո, կհայանաբերվի
կոպարային ապահովագրության յենթակա որ-
յեկտներ, կազմվում է նոր լրացուցիչ կոպարա-
յին ցուցակ և ծանուցազբեր, վորը ներկայաց-
վում է գանձման համար: Այդ նպատակով ոգ-
տագործվում են սովորական կոպարային ցու-
ցակները, վորոնց վրա մակագրվում է «լրա-
ցուցիչ»:

§ 18. Լրացուցիչ կոպարային ցուցակները
կազմվում ե հետեւյալ գեղքերում.—
ա) ԸՆՍ ՅԱՆՔՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ.—

1) Յեթե կհայտնաբերվի ավելորդ տարածություն ցուցակագրական ցուցակում՝ չմուծված (հրան. § 8), կամ յեթե այդ կհայտնաբերվի տեղում ցուցակագրական ցանկը ստուգելիս (հրան. § 10), կամ վնասի լուծարքի ժամանակի (հրան. § 36), կամ յերր կոպարի նորման կիրառելիս, կողոյանա ապահովագրական պակասորդ (հրան. § 37):

2) Յեթե շտապ կերպով կարկատահարության վնասի լուծարքից հետո, կինեն նոր ցանքսեր և տունկեր (հրան. § 14):

բ) ԸՆՍ ԳՅՈՒՂԱԾՆՑԵՍԱԿԱՆ ԱՆՍՍՈՒԵ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ.—

1) Յեթե ապահովադրվողի մոտ անասունների քանակը ստուգելիս կհայտնաբերվի չըցուցակագրված անասուն (հրան. §§ 9, և 17):

2) Յեթե զործառնական տարվա ընթացքում նոր անասուն և ձեռք բերված:

§ 19 ԼՐԱՅՈՒԹԻՉ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՆ, — § 11-ում հիշատակված բոլոր դեպքերի համար կազմված լրացուցիչ ապահովագրական ծանուցագրերը, հանձնվում ե գանձողներին, վոչ ուշ ցագրերը, հանձնվում ե գանձողներին, վոչ ուշ հույսի 1-ից, նրանցով գանձում կատարելու համար:

§ 20 Լրացուցիչ ցուցակներով (ծանուցագրերով) գանձումները բոլոր տեսակ ապհովագրություններից կատարվում են առանց տույժի և յենթակա չեն հարկագրական գանձան:

Լրացուցիչ ցուցակներով չգանձված ապահովագնի մնացորդը, չի դառնում հետնույթ, այլ առնաշգում ե հետեւյալ զործառնական տարվա կոպարին, վորպես ընթացիք տարվա կոպար: Իսկ յեթե այդպիսի ցուցակներով կգանձվի վճարումներ, տպա կմիացվի ընթացիք տարվա կոպարին:

§ 21. ՄԱՅԻՍԻ 31.ի 3 ՀԵՏՈ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԿՈՊԱՐԻ. — Գրուղանունտեսական անասունների մայիսի 31.ից հետո մինչև ոգոստոսի 31-ը և բուսական մշակույթների հունիսի 30-ից հիսոտ մինչև ոգոստոսի 31-ը, ցուցակագրածների ապահովագինն առնաշգում ե հետագա տարվա կոպարին: Ուստի կարիք չկա այդպիսի գույքի տիրոջ համար կազմել լրացուցիչ կոպարային ցուցակ:

§ 22. Լրացուցիչ կոպարային ցուցակները կազմելիս՝ գույք հայտնաբերելիս (§ 10), և գանձումը հետագա տարվա կոպարին կցելիս (§ 14), պետք է զեկավարվել հաշվարկի հետեւյալ նորմաներով: —

ա) գյուղանահետական մշակույթների համար, ցուցակագրված հոկտեմբերի 1-ից մինչև

ոգոստոսի 31-ը, ապահովագին դահճղում ե
տարվա կոպարի լրիվ չափով, իսկ սեպտեմբեռ
ամսում հայտնաբերվածների համար, ապահովա-
գին չի դահճղում բոլորովին:


բ) ըստ անասունների ապահովագրության
նոր ձեռք բերված, ցուցակագրված հոկտեմբե-
րի 1-ից մինչև հունվարի 31-ը ապահովագին
դահճղում ե կոպարի մեկ տարվա չափով, փե-
տրվարի 1-ից մինչև մայիսի 31-ը՝ կես տարվա
ապահովագին չափով, հունիսի 1-ից մինչև ոգոս-
տոսի 31-ը՝ 1/3-ի չափով, իսկ սեպտեմբերում
ձեռք բերվածի համար, ապահովագին բոլորո-
վին չի վերցրվում:

§ 23. ԱՊԱՀՈՎԱԳԻՆԻ ԳԱՆՉՈՒՄԸ.—Մա-
յիսի 31-ից հետո ցուցակագրված գույքի և
հունիսի 30-ից հետո ցուցակագրված բուսա-
կան մշակույթների ապահովագինը պետք ե
գանձել ցուցակագրության ժամանակ, լրացու-
ցիչ ապահովագրություն կաղմելիս, ապահովա-
գրական վնասը վճարելիս և այլ հարմար դեպ-
քերում: Այդ գեղքերի ապահովագինը դահճղում
ե կամավոր կերպով, տալով տերերին՝ ապա-
հովագրական անդորրութեր (Զեկ գ. բ. № 3):

Թանօրություն.—Մայիսի 31-ից հետո ցուցա-
կագրված գույքի ապահովագինը դահճղում ե, պար-
կագրված կերպով, յերբ ապահովագրվողը դիմում ե,
կնքել ապահովագրություն լրացուցիչ (կամավոր)
կարգով և յերբ, նրան տրվում ե ապահովագրական
վարձատրություն.

§ 24. ԱՌՀԱՇՎԱՐԿԱՐԿ ՅԵԿ ՀԵՏԱԳԱ ՏԱՐ-
ՎԱ ԿՈՊԱՐԸ. —Մայիսի 31-ից հետո ցուցակա-
գրված գույքի և հունիսի 30-ից հետո ցուցակա-
գրված բուսական մշակույթների ապահովագինը
պետք ե հաշվել հետագա տարվա կոպարին:
Ուստի վոչ մի լրացուցիչ հաշվարկ, ընթացիք
տարվա կոպարին չի կատարվում և հետեւապես
չի կարող ավելանալ վոչ ընթացիք տարվա կո-
պարը և վոչ ել հետագա տարվան թողնված
հետնույթը: Սակայն յեթե ապահովագրվողը
վճարում ե այդպիսի գույքի համան ապահովա-
գին, այդ փաստացի վճարումը միացվում է
մուտքի գումարին, վորպես նոր հայտնաբեր-
ված գույքի ապահովագին: Այդպիսի գեղքե-
րում կոպարային ցուցակներում վոչ մի լրա-
ցում կամ ուղղում չի կատարվում, մուտք յե-
ղած վճարումները ցույց ե տրվում ընդհանուր
գումարով և գործակալության լրացուցիչ տե-
ղեկագրում առանձին տողով (Զեկ գ. բ. № 5):

Տեղեկագիրն ուղարկվում ե զրասենյակ
հետեւյալ ամսի սկզբին: «Ծանոթություն» սուն-
յակում, կամ յուրաքանչյուր գյուղի տվյալների
տողի տակ, ցույց ե տրվում դանձման անդոր-
րագրերի № №-ը: Յուրաքանչյուր անդորրագ-
րով ստացված գումարը, կարիք չկա թվելու,
կարելի յե ցույց տալ ընդհանուր պահարը:
Բոլոր կարգի գնացող անդորրագրերի № №-ներից



գրվում ե առաջինի և վերջինի ԱՆ.ը այսպես,
որինակ՝ № № 17.23, 25, 27.30 և այն...

§ 25. ԱՌՀԱՇՎԱՐԿՎԱՅ ԱՊՈՀՈՎԱԳՆԻ
ՏԵԽՆԻԿԱՆ. — Բուսական մշակույթի և անա-
սունների ապահովագրության փոփոխության
մակարություններն արվում են ցուցակներում,
հիմք ունենալով փաստաթուղթը. որինակ «գյուղ-
խորհրդի վկայական» 17 ոգոսառուի № 62, «այ-
սինքն գյուղիսորհրդի ներկայացրած վկայականը,
17-ն ոգոսառուի, № 62:

VII

ԲԱՑԱՌՈՒՄՆ ԿՈՊԱՐԻՑ

§ 26. ԲԱՑԱՌՈՒՄՆ ՉԵՎԱԿԵԲԹՊՈՒՄԸ. — § 20-
ում թված գեղերում, ի հաճգցնումն կոպարի,
ստացված ապահովագրինը փաստապես վերա-
գրձրում ե ապահովագրվողին զործառնական
տարվա ընթացքում՝ ստանալով համապատաս-
խան ստորագրություն. Գործառնությունների
ձիւտ հաշվառման համար հարկավոր ե այդպիսի
դեպքերում տվյալ տեսակի ապահովագրության
հաշվարկված կոպարի գումարից բացառել ա-
պահովագրվողին փաստապես վերադարձված
գումարը. Սակայն կոպարային ցուցակներում
այդ մասին վոչ մի նկատողություն չի արվում,
այլ վերագրածներու հետեանքով բացառված
գումարները, յուրաքանչյուր ամիս ընդհանուր

գումարով, ըստ գյուղերի և ըստ ապահովագ-
րության տեսակների զետեղվում ե (գրվում ե)
հաշվարկված կոպարի Զե գ. թ. № 5: Վերսոհիշ-
յալ տեղեկությունները կարող ե գրվեն նաև
այդ ցուցակի հետեւյալ յերեսին, վորով տեղե-
կություն ե տրվում առաջաշվարկի մասին: Այդ
գեղեկում № 5 տեղեկագրի վրա մակարգում է
«լրացուցիչ առ հաշվարկ և բացառման . . . ամ-
սվա, 192 թվի» իսկ հակառակ յերեսում, բո-
լոր սունյակներում վերելց գրվում ե «վճա-
րումները ապահովագրվողին վերադարձնելու
պատճառով, պետք ե բացառել հաշվարկված
կոպարից»: Տեղեկագրի «ձանոթություն» սուն-
յակում, ցույց ե տրվում այն բոլոր սատրա-
գրությունների №№.ը. վորոնցով ապահովագինը
վերադարձված ե:

Մանորություն. — Նույն ձեռվ ել «բա-
ցառման» տեղեկագրով գրանցվում ե կո-
պարի սխալ հաշվարկի դեպքում:

§ 27. ԲԱՑԱՌՈՒՄՆ ԴԵՊՔԵԲԸ. — Հետեւյալ
բոլոր գեղեկերում գանձված ապահովագները
հաշվում են խորպես կոպար՝ հետագա տարվա,
կամ վերադանելիք ապահովագին, զործառնա-
կան տարվա ընթացքում ապահովագրվողներին
ըստ վերջինների ցանկության (յեթե վերջին-
ների վրա չկա հետնույթ, իսկ յեթի կա, ապա
հաշվում ե ի հաշիվ հետնույթի):

ա) Բատ բոլոր տեսակի ապահովագրությունների.

1) Վճարումների սխալ հաշվարկման դեպքում, որինակ՝ գոյություն չունեցող գույքի, կամ կոպարային ապահովագրության վոչ յենթակա գույքի ապահովագին:

2) Յեթե սխալ ե կիրառված կոպարի չափը — նորման և այլն:

3) Թվաբանական սխալի հետեանքով առջացած հավելումը դանձման և հաշվարկման գեղըքերում:

բ) Բատ բույսերի ապահովագրության. —

1) Յեթե վնասի լուծարքի ժամանակ կարողի, վոր տարածությունը ավելի փոքր ե, քան ցուցակագրական ցանկում ցույց տվածը:

2) Յեթե մինչև կարկանարության վնասի լուծարքելը, ցանքսերը բոլորովին կվոչնչան՝ զորախաղերից կամ զորքերի այլ զործողություններից, կամ քաղաքացիական ու զինվորական իշխանությունների կարգադրությամբ. յեթե ցանքսերը բրոլորովին կվոչնչան վնասատուներից, անասուններից, յերաշտից, ցրտահարությունից և այլ տարերային դժբախտությունից, անկախ այն հանգամանքներից, թե յենթարկել են կարկտահարության ու նրա հետեւող հեղեղին, թե վոչ, այդ գեղըքում վերաբան յենթակա ապահովագինը փոխանցվում

։ Հետագա տարվա կոպարի հաշվին (§§ 21 և 41) և վոչ թե վերադարձվում:

Մանրություն. — Յեթե № 2 կետում նշված դեպքում, ապահովագին ապահովագրվեց գենչի ստացված, ապա այդ ցույց ե տրվում ինչպես զիջված: Այդ դումարները գրվում են կոպարային ցուցակների սառչի յերեսին «զիջված» սունյակում (գլուխ X § 40), իսկ գրասենյակին ներկայացվում ե զիջման փաստաթուղթը:

4) Բատ զյուղատնտեսական անասունների ապահովագրության ավելի գանձված ապահովագինը, պետք ե վերադարձվի ապահովագրվեղին — հենց տեղում (հրահ. § 21). իսկ յեթե տեխնիկական անհարմարությունների պատճառով, տեղում հնարավորություն չի լինի վերադարձնելու ապահովագինը, ապա այդպիսին փոխանցվում ե հետագա տարվա կոպարին:

Ապահովագին վերադարձվում է՝

1) Տվյալ անտեսությունից բոլորովին պակասած անասունները մորթելու հոմար, կամ այլ նման պատճառի հետեանքով, յեթե ի հորկե, պակասած անասունի համար ապահովագրական վարձատրություն չի վճարված (հրահ. § 13, և 15):

2) Այն, դեպքում, յեթե անասունի ապահովագինը պակսեցվում է և վնասը վճարվում է ապահովագարական վարձատրությունից պակաս,

այն և անասունի իրական արժեքը (ծանոթ. 2 § 31):

3) Յեթե տվյալ անտեսությունից անտեսունը զատվում է գատական վճռով, բռնադրավմամբ, զինվորական ձիերի մորլիղացիայով, գողացվելու գեպքում և յերբ անցնում է ուրիշ տիրոջ (հրահ. § 23):

Թաճորություն. — Յեթե ուրիշին հանձնելու գեպքում, ապահովագրվողը ձեռք երերել մի ուրիշ անասուն, նույն տեսակի, ապա նրան, ապահովագին չի վերադարձվում:

§ 28. ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ԶԱՐՔ. — Սխալ հաշվարկի հետևանքով առաջացված ապահովագրական հավելումը, վերադարձվում է լիովին: Այն գեպքերում, յերբ գույքը ապահովագրված է մի վորոշ ժամանակիա ընթացքում (վոչ լրիվ աարի) ապահովագինը վերադարձվում է հետեւյալ պայմաններում: —

ա) Բայտ անասունների ապահովագրության լիովին այն անասունների համար, վորոնք վերջնականապես զատված են տվյալ անտեսություններից և նորով չեն փոխարինված, հոկտեմբերի 1-ից մինչև հունվարի 31-ը ժամանակաշրջանում: Ապահովագնի^{1/3}-րդ մասը՝ այն անասունների համար, վորոնք զատված են անտեսություններից, վետրվարի 1-ից մինչև մայիսի 31-ը ժամանակաշրջանում: Բոլորովին չի վե-

րագարձվում, յերբ անսունը՝ զատված է հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ժամանակաշրջանում (հրահ. § 13):

Թաճորություն. — Կոպարույին կարգով սպահովագրված ծախված անասունի ապահովագինը, վոչ մի գեպքում յենթակա չե վերադարձման, այլ ապահովագրական իրավունքը, անասունի հետ միասին անցնում է նոր տիրոջը:

բ) Բայտ ըուլաբերի ապահովագրության՝ վերադարձվում է հաշվարկվաց կապարի 50% ը:

§ 29 ԲԱՇԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ. — Բացառման տեխնիկան կատարվում հետեւյալ ձեվով: —

ա) անասունների ապահովագրության ապահովագինի սխալ հաշվարկի գեպքում, կապարային ցուցակում համապատասխան գումարը հաշվարկի ուղղվում է, իսկ վերադարձվելիք գումարը նույն փաստաթղթում ցույց է տրվում կոպարի տարեկան ընդհանուր գումարի տակ՝ մակագրությամբ «փոխանցելի», այսինքն՝ այդ գումարը պետք է փոխանցել հետագա տարվա վճարումների հաշվին: Յեթե այդ գումարը փաստապես վերադարձված կլինի, ապա չնշվում է և կողքին ցույց տրվում ստորագրությունների և Ն-ը, փորձնագիր վերադարձված է ապահովագրվողներին (հրահ. § 19): Նույն ձեվով կատարվում է նայել բույների ապահովագրության վերաբերմամբ:

բ) Անասունների և բույների ապահովագրության բացառութեարը, գույքի զատման հե-

տեվանքով, կատարվում ե կարմիր թանաքով՝
գումարի, անասունների թվի և ցանքսերի տարա-
ծության (դեսյատին, հեկտոր) ու. հաշվարկված
կողարի ուղղումներով՝ մատնանշելով փաստա-
թուղթը, վորի հիման վրա կատարված ե փոփո-
խությունը: Հետագա տարվա վճարումների հաշ-
վին փոխանցելի գումարը, ինչպես և տպահովա-
գրվողին, վերադարձվելիք գումարը զատվում ե
և արգում և նույն ծանոթությունները, ինչ վոր
առված ե «ա» կետում, սույն հոգվածի: Յեթե
հետագայում այդ գումարը փոխանցվում ե հե-
տագա տարվա վճարումների հաշվին, անվանա-
կան ցուցակներ կազմելիս, ապա այդ գումարը
նույն պես ջնջվում ե առանց վորեվե մատնա-
նշումի:

VIII

ԱՆՑՈՒՍԱԼԻ ՀԵՏՆՈՒԹՅՈՒ

§ 30. ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Գործակալը պետք է միշտ ել ոպտի
հանդամանքից, իր ըրջադայության միջոցին,
տարիսա ընթացքում պարզելու անհուսալի հետ-
նայինները տուաջացած՝ տիրոջ անհայտության
պատճառով, կամ նրա մահվան հետեւանքով, կամ
յերբ չի լինում վորեւ գույք, վորից հսարափոր
լիներ գանձել եալին... Բոլոր այդ որինակ գեպ-
քերում, գործակալը կազմում ե արձանագրու-
թյուն հետեւալ ձեվով (գ. թ. № 8):—

192 թ.» » ամսվ. սույն ակտը
կազմված ե ներկայությամբ քաղաքացիների
ցույց տալ բնակության վայրը և վկաների
ազգանունները) և (ցույց
տալ թե տեղական իշխանության վոր հիմնար-
կության ներկայացուցիչն ե և ազգանունը) առ
այն, վոր ըստ № անդորրագրով (թերթով) ապա-
հովագրված քաղաքացի (ազգանունը և կոչումը)
տունը, վոր գտնվում ի քաղաքում (անունը)
քանդիկել ե, վորեվե բանի պիտանի չե, ինքը
տերը հեռացել ե անհայտ ուղղությամբ, ուստի
նրա վրա մնացած հետնույթը գնամարով
ու կոտ. հսարափոր չե զանձել և պետք ե
զիշել (ստորագրություններ, տեղական իշխա-
նության ներկայացուցիչների, վավերացումը
կնիքի):

Գյուղական վայրերում անասունների և
բյուսերի համար նույնպես կազմվում ե նույն
ձեփով արձանագրություն, նույն ձեփի վրա (ձե
գ. թ. № 8) միայն խմբագրական վորոշ փոփո-
խության և յենթարկվում:

§ 31. ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ.—
Անհուսալի հետնույթների այդպիսի ակտերը,
գործական ուղարկում ե գրասենյակի և հաստա-
տություն: Գործակալը ստանալով գրասենյակից
գրություն ակտի հաստատման մասին, կրաք-
րալին ցուցակում նշանակում ե «ստացված և »

սույնակում զիջված գումարը, իսկ «Ն և ան-
գորրազրերի» սույնակում զիջված ե ըստ ակ-
տի և համաձայն զրասենյակի և
գրության:

§ 32. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՑՎՈՒԹՅՈՒՆԸ.—
Տարվա վերջին, գործակալը զրասենյակին ներ-
կայացնում ե հավաքական տեղեկադիր, ընդհա-
նուր գումարով, զիջված անհուսալի հետևողի-
ների, ավյալ գործառնական տարվա ընթացքում,
ըստ ձեվի (դ. բ. № 8):

Թահորություն.— «Զիջված ե անա-
սունների ապահովագնից» սույնակը պետք ե բաժա-
նել չորս փոքրիկ յենթասունյակների. «խոշոր յեղա-
նասունների, ձիերի, ուղուերի և ավանակների»:

IX

ԱՊԱՀՈՎԱԳՆԻ ԳԱՆՉՈՒՄԸ

§ 33. Ապահովազրական վճարումների գան-
ձումները, կատարում են գյուղ խորհուրդները
համաձայն Հ. Կ. Գ.-կոմի վորոշման՝ (գանձողնե-
րի հատուկ հրահանգով):

§ 34. Գործակալին և գործակալության այլ
աշխատակիցներին այլևս չի թույլատրվում կո-
պարային գանձումներ կատարելու:

§ 35. ԳԱՆՉՈՒՄԸ ՅՈՒԹԱԿՆԵՐԻ ՀԱՆՉԱՄԱՆ
ԿԱՐԳԸ.—Ազգաբնակությունից ապահովին
գանձելու համար, գործակալը հանձնում է գյուղ
խորհրդին ապահովազրական ծանուցազրելը; ան-

գորագրերի գրքույկները, գանձում կատարելու
իրավունքի վկայականը և գանձումների մասին
հրահանդ։ Ապահովազրական ծանուցազրելը
պետք ե հանձնվի գանձողին անձամբ գործակա-
լը, կամ նրա ոգնականը, վերցնելով նրանից
ստորագրություն. ուստի այդ աշխատանքը կատա-
րելու համար, վազորոք նշանակած որում, գան-
ձողներին հավաքում ե շրջգործկոմի կամ գոր-
ծակալության զրասենյակը՝ հարժարվելով տե-
ղական պայմաններին։

§ 36. Գործակալը ծանուցազրելը գանձող-
ներին հանձնելով, պարտավոր են բացատրելու
նրանց գանձման կարգի և գործավարության
մասին։

§ 37. Գործակալը գանձողներից հավաքած
ապահովազինն ընդունում է գործակալության
զրասենյակում, կամ պայմանավորված վայրում
(որինակ զյուղխորհրդի, կամ շրջ. գործկոմի
զրասենյակներում), վորոշված որերում, բայց
վոչ ուշ, բան շաբաթի մեկ անգամ. ընդունման
մասին հայտարարում ե վազորոք։ Հեռու վայ-
րերի գանձողները, կարող են դրամը վոխազրել
փոստով։ Փոստի ծախքը, այդ գեղքում կա-
տարվում է Գետապի հաշվին։

§ 38. Գործակալը գործկոմների միջոցով
պետք ե ձեռք տանի համապատասխան միջոց-
ներ, վորպեսզի զյուղխորհուրդները գանձած

գումարները ժամանակին հանձնեն գործակա-
լության:

§ 39. Յուրաքանչյուր զյուղից ստացված
ապահովագինը նշանակվում է կոպարային ցու-
ցակներում, յերբ գործակալությանը ներկայաց-
վում է ապահովագրական ծանուցազրերի պատ-
ճեները, կրկնակի գանձումներից խուսափելու
համար:

X

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 40. Կոպարի գրքի փոխարեն, տարվում
ե ամբողջ կոպարային վճարումների հաշվառու-
մը ըստ գործակալության, նույնպես և գանձող-
ների հաշվառումը, վորպեսզի վերստուզիչ թվեր
հանվի հետնույթներ դուրս բերելու. դրա հա-
մար պետք է ոգտագործել կոպարային ցուցակի
յերեսի կողմը (առաջին յերեսը) Զեվ գ. թ. № 1:

§ 41. Կոպարային ցուցակի յերեսի կողմը,
միաժամանակ ծառայում է գանձողների համար
առանձին ահանակուն հաշիվ: Յեթե դանձողը մի
քանի զյուղերի համար է, պետք է յուրաքան-
չյուր զյուղի հաշվարկի և կոպարի փոփոխու-
թյունները գրանցել առանձին, ըստ այդ զյու-
ղի: Միևնույն գանձողի փոքր զյուղերը, կարե-
լի յե հաշվի առնել միասին:

§ 42. Կոպարային ցուցակի յերեսի կողմը
լրացվում է հետեւյալ ձևով:

1) Նույն կոպարային ցուցակի կոպարի
հաշվարկի տեղեկագրի համաձայն:

2) Առհաշվարկված կոպարի, լրացուցիչ տե-
ղեկագրի տվյալների համաձայն (Զեվ գ. թ. № 5):

3) Համաձայն ամսական վճարումների բա-
ցառման տեղեկագրի, նշանակվում են այն գու-
մարները, վորոնք պետք է բացառվեն այդ տե-
սակի ապահովագնից, վորպես փաստապես վե-
րադարձված:

4) Քրվում ե՝ անհուսալի հետնույթները,
համաձայն այդպիսիների բացառման տեղեկա-
գրի:

5) Քրվում ե՝ սահացված հետնույթը, հիմ-
նական կոպարը, լրացուցիչ հաշվարկը և առ-
հաշվարկը, վորը նշանակված և նույն կոպարա-
յին ցուցակում:

§ 43. ՏԱՐԲԵՐ ԳԱՆՉՈՂՆԵՐԻ, ԳԱՆՉԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԱՐԱՆՉՆԱՅԱՅՈՒՄԸ. — Գանձողների
հավաքած վճարումները, հիմնարկների (յեթե
գանձված է փարչական կարգով) գանձումներից
տարբերելու համար, կոպարի ցուցակի առաջի
յերեսի, վերջին սունյակում անհրաժեշտ ե
նշել, թե ով է կատարել գանձումը:

Այդ գրանցումով, գործակալն առաջնորդ-
վում է գանձողների և հիմնարկությունների

գանձման գործում ունեցած մասնակցությունը
հաշվառելիս:

XI

ՏՈՒՅՑԻ ՀԱՇՎԱՐԿԸ (ԲԱՐԴՈՒՄԸ) ՅԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ (ԱՆՎԻՃԵԼԻ ԿԱՐԳՈՎ) ԳԱՆ- ՉՈՒՄԸ

§ 44. ՀԵՏՆՈՒՅԹԻ ՏՈՒՅՑԸ.—Անցաւ տա-
րիների հետնույթը, Հոկտեմբերի 1-ից մինչև
կամավոր մուծումների վերջնական ժամկետին
մնացած տպահովագին (վորը հաշվում ե, ընթա-
ցիկ տարում նույնպես հետնույթը) գանձման
հետ բարդվում ե նաև տույժ, այն չափով, ինչ
չափով, վոր վորոշված եր մինչ 30/IX, նախկին
գործառնական տարում: Ընթացիք տարվա վճա-
րումները, այդ ժամանակամիջոցում գանձվում
են սովորական ձևով, այսինքն առանց տույժի:

Առինակ. Քաղ. Կիրակոսյանի վրա հոկտեմբերի 1 ին,
1928 թ., մացել հետնույթ 2 ուուրիի 1928-
1929 գործառնական տարվա կողմար, հաշ-
վարկած ե 4 ուուրի: Կիրակոսյանը 1929
թ. նոյեմբերի ամսին մուծում ե 2 ուուրի
հետնույթ, 1 ու. 8 կոպ. տույժ կամ՝ 54⁰/₀,
հունվարի 1-ից մինչ հոկտեմբերի 1-ը,
1928 թ., այսինքն տասական 6 կոպեկ) և
կոպար 4 ուուրի, ընդամենը 7 ու. 08 կոպ.:

§ 15. ՏՈՒՅՑԸ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԺՈՄԿԵՏԻՑ
ՀԵՏՈ.—Մինչև սահմանված վերջնական ժամկե-

ՄԸ ՀՊԱՆՁՎԱԾ ապահովագինը, հաշվում ե հետ-
նույթ և գանձվում ե վարչական (անվիճելի)
կարգով (պետապահովագր. կան., հոդ. 8), յեթե
իհարկե արտօնությամբ զիջված չեն: Այդ գեպ-
քում, ամբողջ հետնույթը, թե ընթացիկ տարվա
և թե անցյալ աարիների՝ գանձելիս պետք է
բարդել տույժ այն չափով, վոր չափով ընթա-
ցիկ տարվա համար սահմանված ե Ա. Պ. Խ. ի
կողմից (գրասեն. հատ. չրջար.):

Տույժի նախնական հաշիվ չպետք է կազ-
մել, այդ հաշվում ե միայն այն դեպքում, յերբ
հետնույթը գանձվում ե և միայն այդ գումարի
համար:

§ 46. ՀԵՏՆՈՒՅԹԻ ՎԵՐՋՈՒՄԸ.—Կամավոր
մուծումների ժամկետն անցնելուց հետո, զոր-
ծակալը պետք է հավաքի յուր մոտ բոլոր գանձող-
ներին, սահման նրանցից բոլոր գանձված գումար-
ներին, տպահովագրական ձանուցադրերն, անդո-
րապերի գրքույիները և համեմատի յուր մոտ
գրանցված կոպարային ցուցակների հետ, դուրս
բերելով ամեն մի վճարողի հետնույթն, ըստ
անձնական հաշվի (առանձին տողում):

§ 47. ՀՐԱՀԱՆԳՈՒՄՆ ԳՍՆՉՈՂՆԵՐԻՆ,
ՏՈՒՅՑԻ ԲԱՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ.—Կամավոր մու-
ծումների ժամկետն անցնելուց հետո, զործա-
կալը բացատրում է գանձողներին, վոր հետա-
գա բոլոր վճարումներին բարդվում ե տույժ,

այն չափով, վոր չափով սահմանված և տվյալ տարվա համար Ա. Պ. Խ. ի կողմից:

Գանցողներին հրահանգելու ամբողջ աշխատանքը, պետք ե կատարվի ամենակարճ ժամանակում, այն հաշվով, վոր գանձումները չընդհատվեն, կամ հասցնել այդ ամենանվազագույն չափի:

§ 48. Տույժի բարգելու համար յեթե վերջնական ժամկետի վերջին որը վոչ բանվորական որե, այդ՝ և նրան հետևող վոչ բանվորական որերը, հաշվի չեն առնվում և վերջնական ժամկետ համարվում ե առաջին բանվորական որը (հարկերի գանձման հրահանգ, § 11.ի ծանոթ.):

§ 49. Այն որը, վորից պետք ե սկսվի տույժի բարգումը, գործակալը պետք ե տա գանձողներին պարզ ցուցմունքներ:

Թանօթություն.—Լրացուցիչ ցուցակներով գանձումները (§ 22) կատարելիս, տույժ բոլորովին չե վերցվում:

§ 50. **Հեծնոհիթի ԳԱՆՉՈՒՄԸ.**—Վերջացնելով հետնույթների պարզելը (դուրս բերելը) գործակալը սկսում է հարկադրական վճարումների գանձումները, ղեկավարվելով հատուկ հրահանգով, վորն ուղարկվում է նրան դրասենյակից:

§ 51. **ԱՆԴՈՒՐՐԱԳՐԵՐ ՏԱԼԻ.**—Այն մարմինները, վորոնք գանձում են ապահովագրա-

կան վճարումները հարկադրական կարգով. ապահովագրական ծանուցագրերում նշանակում են ապահովագնի և տույժի գանձած գումարը տալով նրանց անդուրրագրեր (Զե գ. բ. № 3), վորը լրացնում են այնպես, ինչպես գանձողն ապահովագինը և տույժը ստանալիս: Աճուրդով ծախված ունեցվացքի անդուրրագրերը դյուդիսուրդիների նախագահների միջոցով հանձնում են տիրոջը:

§ 52. **ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳԱՆՉՈՒՄԸ** ԳՈՒՄԱՐՆԵՐԻ.—Վարչական հիմնարկների—որպանների հարկադրական կարգով գանձված գումարները հանձնվում ե գործակալին:

§ 53. **Վարչական մարմինների միջոցով հարկադրական կարգով ստացված գումարների համար, գործակալը տալիս ե անդուրրագիր՝** (Զե. գ. բ. № 4):

Պայմանագործած տոկոսային վարձատրությունը գործակալը հանձնում է այն իշխանության ներկայացուցիչներին, վորը հարկադրական կարգով կատարել ե գանձումը վերցնելով վերջիններից համապատասխան ստացական: Ստացված գումարները, գործակալը նշանակում է կոպարային ցուցակներում, մուտք է անում դրամարկղի գրքում և յեկ՝ արված տոկոսային վարձատրությունը:

§ 54. ԳԱՆՉՄԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ.—
Վարչական մարմինները, հարկադրական կարգով գանձումներ կատարելու համար, ստանում են վարձտարություն, թե՛ անմիջապես իրենց ձեռքով գանձած գումարների և թե, այն հետույթների համար, վորոնք մուծում են գործակալության գրամարկղը, հարկադրական միջոցներ գործադրելուց հետո, վարձտարության շափը, իրենց գանձած տույժից բարձր չպեսք ելինի:

Մաճորություն.—Վարչական մարմիններին տրվում եւ վարձտարություն գանձած կոպարից, հետույթից, տույժից չի վճարվում:

§ 55. ՍՏԱՑՎԱԾ ՏՈՒՅԺԻ ՏԵՂԵԿԱՆՔԸ.—
Ստացված տույժը գրվում եւ կոպարային ցուցակի յերեսին: Տույժի գանձումների մասին, համաձայն կոպարային ցուցակների տվյալների, գործակալը ֆին հաշվետվության մեջ ցույց ետալիս տույժի սունյակում:

XII

ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԵՏ- ՆՈՒՅԹԻ ՊԱՐՁՈՒՄԸ.

§ 56 Կոպարի կամավոր մուծումների վերջնական ժամանակն անցնելուց հետո (§ 49), գործակալը բոլոր նշումները գանձումների, թե

հարկադրական և թե գանձողների միջոցով, նշանակում եւ կոպարային ցուցակի յերեսին (առաջին յերեսին):

§ 57 ՀԱՇՎԵՓԱԿՈՒՄԸ ԳԱՆՉՈՂՆԵՐԻ հետ
— Սեպտեմբեր ամսում գործակալը հավաքում է գանձողներից, գանձում կատարելու իրավունքի վկայականը, լրացուցիչ ապահովագրական ծանուցագրերը, իսկ վարչական մարմիններից, վորոնք հարկադրական գանձումներ են կատարում, բոլոր անդորագրերի գրքույկները և ապահովագրական ծանուցագրերը ու նրանց հետ վերջնական հաշիվ տեսնում:

§ 58 ՀԵՏՆՈՒՅԹԻ ՊԱՐՁՈՒՄԸ.—Գործակալը կոպարային ցուցակների մեջ գրանցելով բոլոր ստացված գումարները, պարզում է յուրաքանչյուր վճարողի հետնույթի ընդհանուր պակասորդը և գրում եւ այդ համապատասխան սունյակում, սակայն ստացված տույժն այդ սունյակում չի ցույց տրվում: Ստացված տույժի չափի մասին հայտնում եւ գրասենյակ, սահմանված կարգով, ինչպես ասված ե § 55-ում:

§ 59 ՀԱՌԿԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳԱՆՉՈՒՄ-ՆԵՐԻ ՇԱՀՈՒՆԱԿԵԼԸ.—Ամեն մի հետնույթ ունեցողի մասցորդ գումարը պարզելուց հետո, գործակալը հանձնում է ապահովագրական ծանուցագրերը վարչական մարմիններին՝ հարկա-

դրական կարգով գանձումները շարունակելու համար (§ 47):

Տույժի հաշվարկը կատարվում է միայն 1/3, իսկ հետազայռում այդ՝ (տույժը) գանձում և միայն այն չափով, վոր կուտակվել է ժամկետից հետո, այսինքն մինչև հոկտեմբերի 1-ը:

Լրացուցիչ ցուցակներով պակասորդը գումարվում է հետազա՝ դործառնական տարվա հետնույթին և առհաշվարկվում է կոպարին:

XIII

ԳԱՆՉՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

§ 60 ԳԱՆՉՈՂՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ.—Գործակալը պարտավոր է ամեն գեղքում ստուգել գանձողներին, կազմելով այդ մասին համապատասխան արձանագրություն: Զարագիտություն հայտնաբերելու գեղքում, վարվում է այնպես, ինչպես ասված է, գլխավ. վարչութ. «Հրահանդ գործակալներին», XI-րդ գլխում, 1 բաժանման մեջ:

§ 61 ԳԱՆՉՈՂԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՀԱՆՉԲՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ.—Գործակալը շատ խիստ կերպով պետք է հետեւ, վոր գանձողները ներկայացնեն իրենց գանձման գումարները՝ շաբաթը մեկ տնօպամ: Այն գեղքում, յերբ գանձողներն ուշացնում են հերթական մու-

ժումները, կամ շնորհիվ տեղական պայմանների չեն կարողանում ներկայանալ, պայմանավորված տեղը, գործակալն՝ ինքը պետք է շրջի և գանձողներից ստանա գանձած գումարները, վորպեսզի խոշոր չափով դրամ չկուտակվի գանձողների մոտ և վատնումներ տեղի չունենան:

§ 62 ԳԱՆՉՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ.—Գանձողին փոխելու դեպքում, գանձումներ կատարելու շրջանում հաշվարկը փակելուց հետո, պետք է վերցնել նրանից գանձում կատարելու իրավունքի վկայականը, ապահովագրական ծանուցագրերը և անդորագրերի գրքույթները, գորնը հանձնվում են նոր գանձողին: Այդ առթիվ կազմվում է տրձանագրություն, վորի մեջ հիշատակվում է, թե վնրքան և գանձել նախկին գանձողը, վորքան և մնում գանձելու նորին և ինչ Ն. Ն. ով և հանձնված անդորագրեթի գրքույթները, անդորագրերը և ծանուցագրերը նորին:

XIV

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄԸ

§ 63 Այն գործակալները, վորոնք աշխատում են քաղաքային վայրերում, կատարում են ինքնուրույն կերպով ցուցակագրություն (բաղադրներում) անասունների, գյուղատնտեսական մշակույթների և կազմում են կոպարային ցու-

ցակներ, ուր և զետեղում են կրակի ապահովագրական թերթերից բաղած տեղեկությունները, կոպարային ցուցակները հարմարության համար, պետք ե կազմել լսու շրջանների (թաղերի):

§ 64 ԶԵՎԵՐԻ (ԲԼԱՆԿՆԵՐԻ) ԼՐԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ.—Կոպարային ցուցակների, ապահովագրական ծանուցագրերի, կոպարի հաշվարկի, լրացուցիչ հաշվարկի, առհաշվարկի, անհուսալի հետնույթների բացառումն և դիջումն կատարվում ե այն կարգով, վորպիսին սահմանված ե գյուղական վայրերի համար:

§ 65 ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Զքավոր ագրարակչության, կարմիր բանակայիններին, հրշեջ կազմակերպություններին, պըռֆամիության անդամներին և այլ կարգի տրվելիք արտոնությունները՝ նրանց տնտեսությունները՝ լիովին կամ մասնակի կերպով ապահովագրական վճարումներից ազատելու համար, կատարվում ե գրանենյակից ստացված հատուկ հրահանդուրք:

§ 66 ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Արտօնություններ տալու գործավարական ձեր կատարվում ե այնպես, ինչպես նախատեսնված ե գյուղական վայրերի համար, վորը մանրամասնորեն բացարկված ե սույն հրահանդուրք, միայն հետեւալ փոփոխու-

ԹՅՈՒՆՆԵՐՈՎ.—

ա) Ցեթե անպայմանորեն մի շարք բաղացիներին տրվում ե վորոշված չափով զեղջ անվանական ցուցակներում «ստացված ե» սույնակում ցույց ե տրվում զեղջի գումարն, ապահովագնից առանձին իսկ «անդորրագրերի Ն» և սյունյակում այդ գումարի գիմաց դրվում ե այն հիմնարկության կամ կազմակերպության համառոտ անունը, վորի տված փաստաթղթի հիման վրա տրված ե զեղջ, սույնպես և փաստաթղթի Ն-ը և թվագրությունը: Անդորրագրերը տրվում ե միայն փաստապես ստացված գումարի համար:

բ) Թե անցյալ տարիների հետնույթներից և թե կոպարից բացառման գումարի հաշվարկը կազմվում ե առանձին, ըստ յուրաքանչյուր ապահովագրության տեսակի:

§ 67 ՏՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՐԿԸ (ԲԱՐԴՈՒՄԸ) ՅԵՎ ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԳԱՆՉՈՒՄԸ.—Տույթի բարգումը, վճարումների վարչական (անվիճելի) կարգով գանձումները և հետնույթի չափը, հետազա գործառնական տարվա համար, կատարվում ե այնպես, ինչպես ասված ե գյուղական վայրերի համար:

XV

**ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԿՐԱԿԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

§ 68. ՇԵՆԹԵՐԻ ԿԱՏԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓՈՓՈԽՈՒ-

թՅՈՒՆԵՐԸ. — Ամեն մի գործակալ, ոգոսառոս
ամսվա սկզբին, պետք ե ունենա իր ձեռքի
տակ ապահովագրական թերթիկներ, վորոնց մեջ
պետք ե գըվեն գործառնական տարվա ընթաց-
քում կատարված բոլոր փոփոխությունները
շենքերի և նրանց տերերի վերաբերմամբ:

§ 69. ԿՈՊԱՐԻ ՀԱՇՎԵԼԸ. — Գործակալը
գրասենյակից նոր գործառնական տարվա հա-
մար ապահովագրական գումարների նորմաները
և ապահովագնի չտիերը ստանալուց հետո, ան-
միջազգես սկսում ե կոպարի հաշվելն, ապահո-
վագրական թերթիկներում։ Յեթե նորմաների
և ապահովագնի չտիերի մեջ փոփոխություն-
ներ չեն յեղել, ապա մնում ե անցյալ տարվա
թվերը։

Մաճորություն. — Բուռական մշա-
կույթների հաշվարեկը հավասարեցվում է
գյուղական ապահովագրության, նույնպես
իրուսական մշակույթներից ստացված վճա-
րումները հաշվում են, ի հանդցնումն գյու-
ղական կոպարից։

§ 70. ԿՈՊԱՐԱՅՑԻՆ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՒՄ ԿԱ-
ՏԱՐԱՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Գործակալու-
թյան ստացած բոլոր տվյալները, վորեւ փոփո-
խության մասին (նոր կառուցված, կամ վոչըն-
չացված) պետքած շենքերի, սեպամբերեր ամ-
սվա ընթացքում գրվում են ապահովագրական
թերթիկներում, իսկ կոպարային ցուցուկներում

(յեթե նրանք գրանցված են) արվում են կարմիր
թանարով, համապատասխան ուղղումներ, հաշ-
վարկված կոպարի չափով։ Հոկտեմբերի 1-ից
հետո, վոչ մի ուղղում և լրացում ցուցակնե-
րում թույլ չի արվում։

§ 71. ԼՐԱՅՈՒՅՑԻՉԻ ՅՈՒՅԱԿՆԵՐ. — (Տես §
19) Լրացուցիչ ցուցակներ կազմում են հետե-
յալ գեպքերում։

ա) Յեթե նորից ցուցակագրվում ե առան-
ձին շենք կամ ունեցվածք։

բ) Յեթե նոր շենք ե կառուցվել, կամ
նրանց հին արժեքն ավելացել ե, շնորհիվ նոր
վերագնահատման։

§ 72. Մայիսի 31-ից հետո ցուցակագրված
շենքի ապահովագինը, փոխանցվում է հաջորդ
տարվա կոպարին։ ուստի այդպիսի շենքերի տե-
րերի համար լրացուցիչ կոպարային ցուցակներ
և ապահովագրական ծանուցագրեր չեն կաղ-
մվում։

§ 73. ԼՐԱՅՈՒՅՑԻՉԻ ՅՈՒՅԱԿՆԵՐՈՎ ՀԱՇ-
ՎԱՐԿԱԾԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ. — Թե
լրացուցիչ կոպարային ցուցակներ կազմելիս և
թե նոր հայտնաբերված շենքի ապահովագինը
հետագա տարվա կոպարին փախանցելիս, պետք
ե գեկավարվել հաշվարկի հետեյալ նորմանե-
րով։

ա) Նոր շինված, կամ նոր ցուցակագրված,

1-ից հոկտեմբերի մինչև 31-ն հունվարի շենքերի ապահովագինը, վորոշվում ե մեկ տարվա ապահովագնի հասանելիքի չափով, իսկ 1-ից փետրվարի մինչև 31-ն մայիսի՝ տարվա ապահովագնի $\frac{2}{3}$ -ի չափով և 1-ից հունիսի մինչև 30-ն սեպտեմբերի՝ $\frac{1}{3}$ -ի չափով:

բ) Համատարած՝ վերագնահատման հետեւանքով չցուցակագրված շենքերի ապահովագինը, գանձվում ե ընթացիկ տարվա կոպարից՝ բացի նաև վերջին վերագնահատումից հետո, բայց վոլ ավել տարեկան ապահովագնի գումարից:

գ) Համատարած՝ վերագնահատումից հետո մինչև 1-ն հոկտեմբերի ընթացիք գործառնական տարրում շինված շենքերի և գործառնական տարվա ընթացքում ցուցակագրման հետեւանքով հայտնաբերված տների ապահովագինը, գանձվում ե տարեկան ապահովագնի չափով, ընթացիք տարվա կոպարի հետ:

§ 74. ԱՌԱՋՎԱՐԿՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՆԻ ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ ՀԵՏԱԳԱՐՎԱԾ ՏԱՐՎԱ ԿՈՊԱՐԸ. — Շենքերի ապահովագրության նոր կազմած ապահովագրական թերթերում, մայիսի 31-ից հետո նոր ցուցակագրված շենքերի դիմաց նշանակվում ե ցուցակագրության թվագրությունը. որինակ՝ « սեպտեմբերի նոր շենք» կամ « 3 սեպտեմբերի 25 թ. ցուցակագրված

շենքը 15-ն հուլիսի 1925 թ. կամ « 3-ն սեպտեմբերի, 1926, թ. շինված 1-ն հունիսի, 1925 թ. բաց ե թողնված » « բաց ե թողնված », նշանակում ե մոռացված ե համատարած ցուցակագրը բության ժամանակ. Ապահովագրական թերթերում տարվա կոպարի ընդհանուր գումարի տակ ցույց ե տրվում առանձին նոր շինված շենքի համար ապահովագինը, վորպեսզի հետագայում ի նկատի առնվի, հաշվարկելիս: Յեթե այդ գումարը ստացված ե, ապա ջնջվում ե և կողքին գրվում ե անդորրագրի Ա.Ը, վորով ստացված ե ապահովագինը:

Հետագա տարվա կոպարային ցուցակները կազմելիս՝ նոր շինված շենքերի ապահովագնի գումարը, յեթե չի յեղել վճարված առաջ, միացվում ե հիմնական կամ լրացուցիչ հաշվարկի (§ 14) կոպարին, և թերթիկի վրա նշանակվում ջնջելով:

§ 75 ՀԱՎԵԼՄԱՆ ՎԵՐՍԴԱՐՁԼ. — Սխալ հաշվելու հետևանքով գոյացած ապահովագրական հաշվելումը վերադարձվում ե լիովին: Յեթե գույքն ապահովագրած ե միառժամանակով (բայց վոչ լրիվ տարի), վճարումները վերադարձվում են համապատասխան, մինչև գործառնական տարվա վերջը մնացած ժամանակամիջոցին: Այդ գեպքում 15 որը և ավելին ընդունվում ե բեկ ամիս, իսկ 15 որից պակասը՝ հաշվի չի առ-

նվում:

§ 76 ԲԱՑԱՌՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ.—Յեթե շենքը անցնում էն նոր տիրոջ, ապահովագրական թերթիկները չեն վերանորոգվում, այլ՝ այդ շենքի դիմաց զրգում ե ուրիշին անցնելու պատճառը, նոր տիրոջ ապահովագրական թերթիկի Հիմնարկության անունը, վորի տված փաստաթղթի հիման վրա շենքն անցել ե ուրիշին և այդ փաստաթղթի թվագրությունը, որինակ նախկին տիրոջ թերթիկում «ծախված ե № 17 վկայակ., Յ.Մ.Խ. «Յ» հոկտեմբերի, 1925 թ. № 63 տունը», իսկ նոր տիրոջ թերթիկում «գնված ե № 16 վկայականով և այլն...»:

Փաստաթուղթն (վկայականը) ուղարկվում է գրասենյակը ուր արգում ե համապատասխան մակագրություն:


Նախկին տիրոջ կողարք պակասեցվում ե իսկ նոր տիրոջը համապատասխան չափով ավելանում:

Յեթե շենքը քանդվել, վոչնչացվել ե հրդեհից կամ անցել ե ուրիշ տիրոջ, կամ տարվա կեսին յերեաց, վոր յենթակա չե կոպարային ապահովագրության, ապահովագրական թերթիկում ազգում ե համրապատասխան մակագրություն՝ մատնանշելով գեղքը հաստատող փաստաթուղթը, իսկ կողարք՝ ընդհանուր համապատասխան կերպով ուղղվում է։ Փաստաթուղթը

նման մակագրություններով ուղարկվում ե գըրասենյակ, թե այս և թե մյուս դեպքում, վոչ մի գումարի կոպարի ընդհանուր գումարի տակ, ապահովագրական թերթիկում չի դրվում, վորովհետեւ վոչնչացված շենքերի վճարումները չեն վերագարձվում (տես՝ հրանք § 22):



Գրառեալ. № 825 (գ) տիրամ 200
Հայոց կողաքան 2-րդ տակ Յերևան № 4210



ՀՀ Ազգային գրադարան



NL0211381

44.252